ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ներկայացված որոշման ընդունումը բխում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջից, հիմք է ընդունվել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Կոտայքի մարզի տարածքային ստորաբաժանման Նաիրիի բաժանմուքի պետի 2024 թվականի փետրվարի 15-ի N57 գրությունը, համաձայն որի համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն է ներկայացնում համայնքային սեփականություն հանդիսացող բազմաֆունկցիոնալ սարք՝ լազերային տփիչը սեփականության իրավունքով, Կոտայքի մարզի Նաիրիի տարածքային զինկոմիսարիատին անհատույց տրամադրելու մասին որոշման նախագիծը:

ՏԵՂԵԿԱՆՔ

Համայնքային սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին որոշման նախագծի

Համայնքային սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին ընդունումը համայնքի 2024 թվականի բյուջեում ծախսերի և եկամուտների ավելացում կամ նվազեցում չի ենթադրում: